



**«ՈՂՋՈՒՅՆ ՁԵՐ ՆՈՐ ԿՅԱՆՔԻՆ. ԿՈՄԻՏԱՍԸ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»
ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

2019 թ. սեպտեմբերի 26-ին (հին տոմարով՝ հոկտեմբերի 8-ին) լրացավ կոմպոզիտոր, հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, երաժշտագետ, բանահավաք, խմբավար եւ երգիչ Կոմիտասի (1869—1935) 150-ամյակը: Նրա անունն ընդգրկված էր նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների 2018—2019 թթ. օրացույցում: Այս առիթով լույս տեսած աշխատությունների շարքում է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակած «Ողջուն ձեր նոր կյանքին. Կոմիտասը՝ մանուկներին» գիրքը¹: Այն տպագրվել է ՀՀ մշակույթի նախարարության պատվերով եւ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Մանուկներին եւ պատանիներին հասցեագրված գրքի հեղինակը Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանն է: Նախագիծն իրականացվել է հետեւյալ աշխատանքային խմբով՝ Ալեսա Հակոբյան (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ), Աստղիկ Մարտիրոսյան (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ), Անահիտ Կարապետյան (ՀՀ արտաքին գործերի նախարարություն) եւ Գայանե Ամիրաղյան (Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ): Նկարիչը եւ ձեւավորողը Դավիթ Ստեփանյանն է: Նոտային շարվածքն ապահովել են թանգարան-ինստիտուտի աշխատակիցներ Անահիտ Մուղալյանը եւ Սոնա Սիմոնյանը:

Սույն աշխատանքի նպատակն էր հավաքել եւ ի մի բերել Կոմիտասի՝ երեխաներին հասցեագրված, ինչպես նաեւ կատարման համար նրանց մատչելի ստեղծագործությունները: Այս առումով գիրքը կարող է մեծ կի-

¹ ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ, Ողջուն ձեր նոր կյանքին. Կոմիտասը՝ մանուկներին, TATEVIK SHAKHKULYAN, Greeting to your new life: Komitas for juniors, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Երեւան, 2019, 144 էջ:

րառություն ունենալ հատկապես դպրոցական տարիքի երեխաների շրջանում: Այն կարող է լինել հիանալի ուղեցույց նաեւ ուսուցիչների համար, որոնք աշակերտներին հանձնարարվող եւ նրանց հասու կոմիտասյան ստեղծագործություններն այսուհետ կարող են գտնել մեկ աղբյուրում:

Գրքի վերնագրի առաջին մասը՝ «Ողջուն ձեր նոր կյանքին», քաղված է Կոմիտասի մի նամակից, որը գրվել է 1912 թ. հոկտեմբերի 15-ին (կամ՝ 28-ին) եւ ուղղված է Կոմիտասի աշակերտուհի, հետագայում՝ մշակութային գործիչ Մարոնոս Ստամպոլյանին: Նամակում վարդապետն իր շնորհալի աշակերտուհուն է ձոնել մի մաղթանք-բանաստեղծություն²:

Գիրքը երկլեզվյան է՝ հայերեն եւ անգլերեն, ուստի հասանելի է ոչ միայն հայ, այլեւ օտարազգի երեխաներին: Բաղկացած է 144 էջից:

Գրքում Կոմիտասը ներկայացվում է յոթ բաժիններով: Առաջին երեք բաժիններում, հանրամատչելի կերպով եւ հետաքրքիր փաստերով համեմված, շարադրված են Կոմիտասի կյանքը, գործունեությունը (բանահավաք, հետազոտող-երաժշտագետ, կոմպոզիտոր, կատարող, բանաստեղծ, պարի գիտակ) եւ կերպարը: Հայկական մշակույթին վերաբերող մի շարք հարցեր, որոնք այս կամ այն կերպով առնչվում են Կոմիտասի գործունեությանը (օրինակ՝ հայկական նոտագրություն, բարբառներ, «Սասնա ծռեր» էպոս եւ այլն), ներկայացված են «Դու գիտե՞ս, որ...» բաժնում: Առանձին բաժնով ներկայացվում են Կոմիտասի մտքերը զանազան հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ հայերի, ուսման, երաժշտության, պարի, մանուկների եւ այլն:

Հաջորդող բաժնում ներկայացվում է բանաստեղծ Կոմիտասն իր չափածո ստեղծագործություններից կազմված ընտրանիով (21 միավոր), որոնք գրքում տեղ են գտել կոմիտասյան ուղղագրությամբ: Դրանց շարքում ընդգրկված են եւ քառատողեր (օրինակ՝ «Ուռի ցօղ», «Բաղձանք», առանձին քառատողեր), եւ երեխաներին մատչելի միջին ծավալի գործեր (օրինակ՝ «Ծաղիկն ու շաղիկ», «Աշուն-գիշեր», «Աշուն կեանք», «Սէր-հովիկ», «Նոճիներն ու մայրիներ», «Գարուն», «Հունձք», «Աղօթք»), եւ ավելի ծավալուն, բայց մանուկներին ու պատանիներին վստահաբար հետաքրքրող եւ ուսանելի բանաստեղծություններ («Բուսաբարեւ», «Առակ»): Նշելի է, որ կոմիտասյան անչափ գրավիչ, բայց երեխաների

² Նամակն ու դրա մասին տեղեկությունը տե՛ս ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ, Նամականի, աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի, Երեւան, Սարգիս Խաչենց հրատ., 2009, էջ 210—211, նույնի՝ ծանոթագրութիւններ, էջ 463—464:

համար հաճախ անհասկանալի թվացող բոլոր բառերի բացատրությունները տրված են համապատասխան բանաստեղծությունը կից:

Վարդապետի կերպարն ամբողջացնում է նրա մանկական եւ պատանեկան ստեղծագործությունների հավաքածուն, որն ընտրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում անվանի երաժշտագետ Ռոբերտ Աթաջանի կազմած, Կոմիտասի՝ 14 հատորով հրատարակված ժողովածուներից: Այս շարքում ընդգրկված են երգեր («Փայտէ ձիուկ», «Օր, օր», «Հայր մեր» մանկական աղօթք), խմբերգեր («Ճուտիկներն ու մանկիկը», «Ախ, մարալ ջան», «Աղուէս գնաց մտաւ ջաղաց», «Ջան, գառնուկ», «Աղուէս պառկեց ճամբի տակին», «Գնացէք տեսէք՝ ո՞վ է կերել այծը», «էս առուն», «Սար, սար», «Նոր եմ մածուն մերել», «էսօր ուրբաթ է», «Անձրեւն եկաւ», «Սոնա յար», «Նանիկ, նանանիկ») եւ դաշնամուրային ստեղծագործություններ (12 մասից բաղկացած դաշնամուրային մանրանվագներ, եռամաս «Փոքրիկ պոլիֆոն շարանուագ», «Տողիկ»): Ի դեպ, երգերի եւ խմբերգերի հայերեն բնագրերն ուղեկցվում են Հյուբըման—Մեյե—Բենվենիստ լատինատառ տառադարձումներով: Դրանք ճիշտ կարդալու համար զետեղված է նաեւ արտասանության ուղեցույց:

Հատկանշական է, որ գրքում ընդգրկված ամբողջ նյութը մանրախնդիր կերպով հավաքվել եւ կազմվել է երեխաների ու պատանիների տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Ավելին. գրքի նկարիչ եւ ձեւավորող Դավիթ Ստեփանյանը գրքի նկարազարդումների համար աշխատել է 5—15 տարեկան շուրջ քսանութ երեխայի հետ՝ Կոմիտասին ներկայացնելով հենց մանուկների աչքերով: Գրքում օգտագործվել են նաեւ Կոմիտասի գծանկարները, Կոմիտասից մի ձեռագիր՝ հայկական նոր նոտագրությամբ, եւ խազագիր ձեռագրի մի նմուշ:

Ամփոփելով նշենք, որ կցանկանայինք տեսնել «Ողջունն ձեր նոր կյանքին. Կոմիտասը՝ մանուկներին» գրքի «ցանած պտուղները», այն է՝ մանուկների շուրթերից լսել իրենց համար պարզ, հասկանալի եւ ստույգ տեղեկություն Կոմիտասի մասին, ինչպես նաեւ նրա ստեղծագործությունների ճշգրիտ կատարումներ եւ մեկնաբանումներ:

ԱՍՏՂԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա